

Հ. Ք. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄ ՔԵԶԵԿ

Սովետական Հայաստանի վերաբուժության հիմնադիրների շարքում իր արժանի տեղն ունի պրոֆեսոր Համբարձում Սերաֆիմի Քեչեկը։ Մեծ են նրա ծառայությունները մեր հանրապետության մեջ վերաբուժության, բժշկական կրթության ու բժշկագիտության զարգացման բնագավառում թե՛ իբրև գիտնական ու պրակտիկ, թե՛ իբրև մանկավարժ ու կազմակերպիչ։ Նրա ջանքերով ու նախաձեռնությամբ են Երևանի պետական համալսարանում ստեղծվել վերաբուժության ամբիոնն ու բժշկական ֆակուլտետը, նա է հիմնադիրը հայ վերաբուժական դպրոցի ու Հայկական բժշկական ընկերության, որի անփոփոխ նախագահն էր շուրջ 12 տարի։

Ծնվել է 1872 թ. հունիսի 6-ին Նոր-Նախիջևանում (այժմ Դոնի Ռոստովի Պրոլետարական շրջան) արհեստավորի ընտանիքում։ Հայրը՝ Սերաֆիմ Սերգեյի Քեչեկը, ձգտում էր որդիներին լավ կրթություն տալ։ Եվ զարմանալի չէ, որ երեք եղբայրներն էլ ստանում են բարձրագույն բժշկական կրթություն։

Ավարտելով տեղի հայ թեմական դպրոցը, 1890 թ. Համբարձում Քեչեկը ընդունվում է Դոնի Ռոստովի քաղաքային գիմնազիայի 7-րդ դասարանը, որը հաջողությամբ ավարտում է 1892 թվականին։ Նույն տարին քսանամյա Հ. Ս. Քեչեկը ընդունվում է Պետերբուրգի Ռազմա-բժշկական ակադեմիան և մեծ սիրով ու եռանդով սկսում ուսումնասիրել բժշկագիտության հիմունքները։ Սակայն նա երկար չի մնում ակադեմիայում. ընտանեկան պատճառներով ստիպված է լինում երկու տարի անց տեղափոխվել Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը, որը ավարտում է 1897 թվականին գերազանց դիպլոմով, ստանալով դավանական բժշկի կոչում։

Երիտասարդ բժշկի առջև կանգնում է նեղ մասնագիտություն
ընտրելու հարցը: Դեռևս ուսանողական տարիներին Հ. Ս. Քեչեկը
հրապուրվում էր վիրաբուժությամբ և դրանում փոքր դեր չէին
խաղացել ուսուսականավոր վիրաբույժներ Ա. Ա. Բորբուլի, Պ. Ի.
Դյակոնովի, Լ. Լ. Լեշինի, Ի. Կ. Սպիժարնու և այլոց դասախոսու-
թյունները: Վճիռն ընդունված է. վերադառնալով հայրենի բաղաքը,
Հ. Ս. Քեչեկը ճիշտ է մեծ դժվարությամբ, բայց տեղավորվում է
Դոնի Ռոստովի քաղաքային հիվանդանոցի վիրաբուժական
բաժանմունքում իրրե գերհաստիքային բուժող բժիշկ Ծուտով նա
հրավիրվում է աշխատանքի Վլադիկավկազի երկաթուղի և նշա-
նակվում ներկոմիսիի երկաթուղային հիվանդանոցի վարիչ: Երկու
տարի աշխատելուց հետո, 1900 թ. հունվարին մշտական բնա-
կություն է հաստատում Պետերբուրգում և էքստեն կարգով
ընդունվում է Ռադմա-բժշկական ակադեմիայի վիրաբուժական
կլինիկան, որն այդ ժամանակ գլխավորում էր ուսուսականավոր
վիրաբույժ և հասարակական գործիչ պրոֆեսոր Ն. Ա. Վելյամինովը:
Հ. Ս. Քեչեկի նկատմամբ պրոֆեսորի բարեհաճ վերաբերմունքով
կարելի է մասամբ բացատրել այն, որ երիտասարդ բժիշկը շուրջ
տասը տարի աշխատում է այդ կլինիկայում, որը բախտորոշ
նշանակություն է ունենում նրա կյանքում. այստեղ նա աճում-
դառնում է անվանի վիրաբույժ և ցուցաբերում գիտաշխատողի
արտակարգ ընդունակություններ, փայլուն կերպով պաշտպանելով
(1910 թ.) դոկտորական դիսերտացիա (թեման՝ «Lupus Vulga-
rus-ի բուժումը պրոֆ. Վելյամինովի ակադեմիական վիրաբու-
ժական կլինիկայի տվյալներով»): Մինչ այդ, 1908 թ. դիսեր-
տացիայի հիմնական դրույթները նա զեկուցում է Ռուսաստանի
վիրաբույժների VII համագումարում:

Պետք է ասել, որ Հ. Ս. Քեչեկը մեր երկրում լուսաբուժության
պիոներներից է: «Լուսաբուժության և լուսաքիմիական բորբոք-
ման շուրջ» թեմայով իր առաջին գիտական աշխատությունը նա
հրապարակել է դեռևս 1899 թվականին Դոնի Ռոստովի և Նոր-
նախիջևանի բժիշկների ընկերության աշխատություններում:

Հայտնի է, որ լուսաբուժության գիտականորեն մշակված
մեթոդների հիմնադիրը դանիացի ֆիզիոթերապևտ Նիլս Ֆինզենն
է, որին 1903 թ. շնորհվեց Նոբելյան մրցանակ՝ ուլտրամանիշա-
կագույն ճառագայթների կենսաբանական ազդեցության և բուժա-
կան (մասնավորապես մաշկի տուբերկուլյոզի) կիրառման բնա-
գավառում ներդնելու համար: Ֆինզենը լույսի արհեստական

աղբյուրի իր լամպը առաջարկել էր 1896 թվականին: Իսկ երեք տարի անց, 1899 թ. Հ. Ս. Քեչեկը առաջինը Ռուսաստանում հայտնեց այդ լամպի կիրառման իր փորձի մասին, հետագայում ևս զեկուցումներով ու հոգովածներով հանդես գալով տուբերկուլյոզային դալախտի դեպքում այդ լամպի օգտագործման հարցի շուրջ¹:

Ռազմա-բժշկական ակադեմիայի վիրաբուժական կլինիկայում աշխատելիս Հ. Ս. Քեչեկը ուսումնասիրում է նաև միզաբանություն, որն այդ տարիներին բուռն զարգացում էր ապրում ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արտասահմանում:

1900—1910 թթ. ընթացքում Հ. Ս. Քեչեկը երեք անգամ մեկնում է արտասահմանյան գործուղման: Փարիզում և Բեռլինում ծանոթանում է միզաբանության ասպարեզում ձեռք բերված նվաճումներին ու ժամանակի ականավոր միզաբաններին՝ Ալբա-ռոնի, Հյույոնի, Իզրայելի, Կասպերի և այլոց աշխատություններին:

Արտասահմանյան երկրորդ ուղևորությունից հետո Հ. Ս. Քեչեկը նշանակվում է Ն. Ա. Վելյամինովի կլինիկայի միզաբանական բաժանմունքի վարիչ:

1910 թ. Քեչեկը աշխատանքի է հրավիրվում իր հայրենի քաղաքը և նշանակվում Նոր-Նախիջևանի քաղաքային հիվանդանոցի գլխավոր բժշկի ու վիրաբուժական բաժանմունքի վարիչի պաշտոնում: Նրա համար սկսվում է շատ պատասխանատու և պրակտիկ գործունեությամբ հագեցած մի շրջան:

Սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը, և Հ. Ս. Քեչեկը ներգրավվում է վիրավորների վիրաբուժական օգնությունը կազմակերպելու գործում: Մեծ հաջողությամբ կազմակերպելով 1200 մահճակալանոց զինվորական հիվանդանոց և 120 մահճակալանոց հիվանդանոց սպաների համար, նա այնուհետև գլխավորում է օրթոպեդիկ ինստիտուտը և սպաների հիվանդանոցը, անձամբ կատարելով բազմաթիվ բարդ վիրահատություններ:

Վարչական և գործնական բժշկական աշխատանքին զուգընթաց Հ. Ս. Քեչեկը այդ տարիներին շարունակում է զբաղվել գիտական

¹ Ռուս անվանի վիրաբույժ Վ. Ն. Շամովը, որ նույնպես Ռազմա-բժշկական ակադեմիայի սաներից է եղել, 1934 թ. գալով Երևան ու հանդիպելով Հ. Ս. Քեչեկին, հիշում է վիրաբուժության մեջ լուսաբուծության մասին նրա աշխատանքները: Բարձր զնահատելով այդ աշխատությունները, Վ. Ն. Շամովը նշում է, որ դրանք որոշ դեր են խաղացել իր գոկոորական դիսերտացիայի թեման ընտրելիս:

աշխատանքով: Հրապարակում է գործնական վիրաբուժության հրատապ հարցերին նվիրված հոդվածներ:

1916 թ. Հ. Ս. Քեչեկը մանկավարժական աշխատանքի է հրավիրվում վարչավայրի համալսարանի բժշկական ֆակուլտետը, որն այդ ժամանակ գտնվում էր Դոնի Ռոստովում, ընտրվում է պրոֆեսոր և վարում միդարանության դասընթացը: Հետագայում նա մեծ սիրով էր հիշում իր մանկավարժական գործունեության այդ շրջանը:

1919 թվականին Հ. Ս. Քեչեկն ընտանիքով տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ նրան առաջարկում են վիրաբույժ-խորհրդատուի պաշտոնը Օդուրգետիի հիվանդանոցում: Մինչև 1923 թ. նա ապրում և աշխատում է Օդուրգետիում (այժմ Մախարաձե), որը վիրաբուժական մեծ գործունեություն է ծավալում, բնակչության լայն շրջաններում ձեռք բերելով հմուտ և ուշագիտ բժշկի ու բարի մարդու համբավ:

1923 թ. Նրեանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի վիրաբուժության ամբիոնի վարիչի տեղի համար հայտարարվում է մրցույթ, որին հրավիրվում է մասնակցելու նաև Հ. Ս. Քեչեկը և միաձայն ընտրվում այդ պաշտոնում: Քեչեկի ամբողջ հետագա կյանքը կապվում է Նրեանի հետ:

Միանգամայն նոր ու պայծառ էջ է բացվում Հ. Ս. Քեչեկի կյանքում: Բժշկական իր խոր գիտելիքները, կազմակերպչական ու մանկավարժական փորձն ու զիտաշխատողի հմտությունը նախ և առաջ է դնում Սովետական Հայաստանում առողջապահության զարգացմանը և կադրերի պատրաստմանը:

Առաջին վիրաբուժական ամբիոնի ու կլինիկայի կազմակերպման հետ կապված վիթխարի աշխատանքին զուգընթաց Հ. Ս. Քեչեկը ակտիվորեն մասնակցում է նաև բժշկական ֆակուլտետում այլ ամբիոններ ստեղծելու գործին, ինչպես նաև պրոֆեսորա-դասախոսական կադրերի ընտրությանը, կադրերի պակասության պատճառով Հ. Ս. Քեչեկը ստիպված է լինում վիրաբուժությունից բացի կարգալ նաև ընդհանուր անատոմիայի դասընթաց:

Ընդամենը մի քանի տարի անց Հ. Ս. Քեչեկի ղեկավարած վիրաբուժական կլինիկան դառնում է Սովետական Հայաստանի վիրաբուժական գիտության հիմնական կենտրոնն ու կադրերի պատրաստման դարբնոցը: Կլինիկայում բազմակողմանի աշխատանք է ծավալվում բնակչությանը, բժշկական և առողջապահական օրգաններին խորհրդակցական ու մեթոդական օգնություն ցույց տալու ուղղությամբ:

2. Ս. Քեչեկը համարձակորեն վիրաբուժական պրակտիկայում ներդնում է բժշկագիտության նվաճումները: Կլինիկայում կատարվում են ամենատարբեր վիրահատություններ: Նա առանձնահատուկ ուշադրություն է դարձնում միզասեռական համակարգի հիվանդություններին և իրավամբ համարվում է միզաքանուկության հիմնադիրը Հայաստանում: Միզաքանուկության ասպարեզում տեսական խորը գիտելիքներն ու հարուստ փորձը նրան հնարավորություն են տալիս հաջողությամբ ներդնել միզասեռական համակարգի օրգանների, մասնավորապես երիկամների ու շագանակագեղձի հիվանդությունների հետազոտման ու բուժման նոր մեթոդներ: Նա ձգտում է իր ղեկավարած կլինիկայում ու ամբիոնում աշխատանքները կազմակերպել Մոսկվայի և Լենինգրադի համապատասխան հիմնարկությունների օրինակով:

2. Ս. Քեչեկը հեղինակ է ավելի քան 30 աշխատությունների՝ նվիրված աղեկ-ստամոքսային ուղուն, միզասեռական համակարգին, հենաշարժիչ ապարատին և այլն: Իսկ տուբերկուլոզային գայլախտի բուժման համար Ֆինլենդի լաուպի կիրառման վերաբերյալ նրա հետազոտությունները առաջինն էին մեր երկրում: Վեց աշխատանք նվիրված է միզասեռական համակարգի հիվանդություններին, մասնավորապես շագանակագեղձին ու երիկամաքարին: Հիշատակության արժանի է շագանակագեղձի հեռացումից հետո վերքի խնամման նրա մեթոդիկան, որ հայտնի է իբրև Քեչեկի վիրախժուժում:

Ուշագրավ են երիկամաքարի հիվանդությանը վերաբերող հետազոտությունները: 2. Ս. Քեչեկն առաջինն է մեր հանրապետությունում զբաղվել այս պրոբլեմով: Նրան հատկապես հետաքրքրում են երիկամաքարի առաջացման պատճառները Հայաստանում: Կլինիկական բազմաթիվ դիտումների վերլուծության հիման վրա նա գալիս է այն եզրահանգման, որ երիկամաքարի առաջացման գործում մալարիան վճռական դեր չի խաղում, ինչպես պնդում էին մասնագետներից ոմանք: Հետագայում լիովին հաստատվեց 2. Ս. Քեչեկի իրավացիությունը. չնայած մալարիան վերացվեց, երիկամաքարի հիվանդությունը Հայկական ՍՍՀ-ում շարունակում է մնալ տարածված: Ներկայումս մեզ քաջ հայտնի է, որ այդ հիվանդության պատճառները մեր հանրապետությունում տարբեր են: Պատճառներից մեկն, օրինակ, հողում և ջրում որոշ միկրոտարրների պակասն է: Հայկական ՍՍՀ-ում երիկամաքարի հիվանդության իր դիտումների արդյունքների մասին նա

զեկուցել է Վիրաբույժների անդրկողմկասյան առաջին համագումարում (1925 թ., Բաքու)։ Տասը տարի անց շատ ավելի հարուստ նյութով ու նոր տվյալներով ղեկուցեմամբ հանդես է եկել երկրորդ համագումարում (1935, Թբիլիսի)։

Հ. Ս. Քեչեկը Ս. Պ. Նանասյանի հետ միասին Հայաստանում հայտնաբերել է բիոհարցիոդի գեպը և նկարագրել այն։

Վիրաբույժների XVII համառուսաստանյան համագումարում (1925, Լենինգրադ) հանդես է եկել պարանոցի արնաբուշտերի մասին ղեկուցմամբ։ Մի շարք աշխատանքներ նվիրված են շագանակագեղձի արտահատմանը, արգանդի և նրա մակաճուղիների վիրահատության ժամանակ միզածորանի նախազգուշական կաթեաերացմանը, ըմպանահատման միջոցով մակակոկորդի հեռացմանը և այլն։

Հ. Ս. Քեչեկի գիտական գործունեության հետ այս թուղթիկ ծանոթությունն անգամ պատկերացում է տալիս նրա գիտական որոնումների բազմազանության և լայնության, ինչպես նաև կլինիկական վիրաբուժության ասպարեզում նրա ծանրակշիռ վաստակի մասին։

Անդնահատելի են նրա ծառայությունները վիրաբուժական գործի կազմակերպման ու բարելավման ուղղությամբ։ Լինելով վիրաբուժական հիվանդությունների գիտա-գործնական խորհրդի նախագահ, նա ակտիվորեն մասնակցել է բնակչության վիրաբուժական օգնության որակը բարձրացնելու միջոցառումների մշակմանը, արժեքավոր խորհուրդներով օգնել առողջապահական մարմիններին։ Ուշագրավ են Հայկական ՍՍՀ-ում վիրաբուժության կազմակերպմանն ու զարգացմանը նվիրված հոդվածները՝ «Հայաստանում վիրաբուժական գործի ընդհանուր տեսություն», «Բժշկությունը վերականգնման շրջանում», «Գիտա-գործնական խորհուրդների գործունեությունը» և այլն։

Բազմակողմանի էր նաև նրա ղեկավարած ամբիոնի և կլինիկայի կոլեկտիվի գիտական գործունեությունը։ Այստեղ ախտաբանական հարցերին զուգընթաց մշակվում են նաև վնասվածքաբանության, արյան փոխներարկման, ցավազերծման և այլ հարցեր։

Շատ ուժ ու եռանդ էր տալիս Հ. Ս. Քեչեկը մանկավարժական գործունեությանը։ Ուսանողների համար նրա կազմած հիվանդության պատմության սխեման մինչև օրս էլ չի կորցրել իր նշանակությունը։ Վիրաբուժական հիվանդությունների դիֆե-

րենցիալ ախտորոշման նրա մեթոդիկան, որը հիմնված է գլխավոր և երկրորդական ախտանիշների հայտնաբերման սկզբունքի վրա, այսօր էլ կիրառվում է Երևանի բժշկական ինստիտուտի վիրաբուժական կլինիկաներում:

Հ. Ս. Քեչեկը փայլուն դասախոս էր: Նրան հաճույքով ունկընդորում էին ոչ միայն ուսանողները, այլև տարբեր մասնագիտությունների բժիշկներ: Քննարկվող նյութի լրջությունը նրան չէր խանգարում դասախոսությունը դարձնել մատչելի, աշխույժ ու հետաքրքիր: Սա զարմանալի չէ, եթե հիշենք, որ Հ. Ս. Քեչեկը բազմակողմանի զարգացած մասնագետ էր, ծանոթ պատմությունը, ֆիզիկային, մաթեմատիկային և այլ գիտություններին, հայերենից ու ռուսերենից զատ տիրապետում էր նաև եվրոպական մի քանի լեզուների, այդ թվում հին հունարենին և լատիներենին:

Քիչ ջանք ու եռանդ չի ցուցաբերել Հ. Ս. Քեչեկը ուսումնական պրոցեսի բարելավման և կարգապահության բարձրացման համար համալսարանի բժշկական ֆակուլտետի դեկան եղած տարիներին (1925—27 թթ.):

Բժշկական, մանկավարժական և գիտական գործունեության հետ մեկտեղ Հ. Ս. Քեչեկը ակտիվորեն մասնակցում էր նաև երկրի հասարակական կյանքին:

Մանր հիվանդությունը ստիպեց Հ. Ս. Քեչեկին 1940 թ. հրաժարվել Երևանի բժշկական ինստիտուտի ամբիոնի և ֆակուլտետային վիրաբուժության կլինիկայի վարիչի պաշտոնից: Բայց նա շարունակում է աշխատել իբրև խորհրդատու: ՍՍՀՄ ժողովուրդների առևտրի բարձրագույն դպրոցի գործերով համամիութենական կոմիտեի 1940 թ. ապրիլի 26-ի հրամանում նշվում է «...բժշկական, գիտական, մանկավարժական և հասարակական ասպարեզում 44 տարվա ընթացքում գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Հ. Ս. Քեչեկի կատարած բացառիկ մեծ ու արժեքավոր աշխատանքը»:

Սակայն Հ. Ս. Քեչեկի «հանգիստը» երկար չի տևում: Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, և նա վերստին անցնում է բժշկական ակտիվ գործունեության: Ականատեսները հիշում են, թե ինչպես ծանրամարմին այդ հիվանդ մարդը, ձեռնափայտը ձեռքին հաղիվ քայլելով այցելում էր էվակուացիոն հոսպիտալները և իր խորհուրդներով նպաստում վիրավորների արագ ապաքինմանը:

Նա շարունակում էր դեկավարել իր շատ սաների ու նախկին աշխատակիցների գիտական աշխատանքները, գրախոսում դիսեր-

տացիաներու Այդ տարիներին Հ. Ս. Քեչեկի բնակարանը վեր էր անցնել չորատեսակ մի կոնսուլտացիոն բյուրոյի, որ հանրապետութեան բուժաշխատողները արժեքավոր խորհուրդներ էին ստանում ոչ միայն վիրարութեան, այլև բժշկութեան մյուս բաժիններէ՝ իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

Կյանքի վերջին տարիներին Հ. Ս. Քեչեկը տառապում էր ծանր ստենոկարդիայով: Հերթական նոպաներից մեկի ժամանակ էլ, 1948 թ. սեպտեմբերի 3-ին, 77 տարեկան հասակում նա մահանում է:

Հ. Ս. Քեչեկը շուրջ 52 տարի ծառայեց իր ժողովրդին, զգալի ավանդ ներդնելով ուսուսումնական վիրարութեան գիտութեան գանձարանը, կյանքի կոչելով բազմաթիւ հիվանդների և դաստիարակելով վիրարութեան մի վիթխարի բանակ, որն այսօր պատվով շարունակում է իր ուսուցչի գործը:

Նրա վաստակը առողջապահութեան, բարձրագոյն բժշկական կրթութեան, կադրերի պատրաստման և բժշկագիտութեան բնագավառում բարձր է գնահատուելի: Դեռևս 1935 թ. նրան շնորհվել է գիտութեան վաստակավոր գործչի կոչում: 1945-ին երկարամյա և անբասիր աշխատանքի համար նա պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: Նրա անունն է կրում Հանրապետական կլինիկական հիվանդանոցի վիրարութեան բաժանմունքը: Հանրապետութեան կառավարութիւնը բժշկական ինստիտուտում սահմանել է Հ. Ս. Քեչեկի անվան թոշակ:

Հ. Ս. Քեչեկի մահից անցել են տարիներ: Վիրարութեան մեր հանրապետութիւնում մեծ հաջողութիւնների է հասել և՛ վիրարութեան գիտութեան բնագավառում, և՛ բարձրորակ կադրերի պատրաստման, և՛ հատկապես բնակչութեան վիրարութեան օգնութիւն ցույց տալու գործում: Եւ ամեն անգամ այս հաջողութիւնների մասին խոսելիս Սովետական Հայաստանի ողջ բժշկական հասարակայնութիւնը երախտագիտութեամբ է մտաբերում հանրապետութեան առաջին վիրարութեան դպրոցի հիմնադրի ու երկարամյա ղեկավարի, իր մեծ ուսուցչի և անձնվեր հայրենակցի՝ պրոֆեսոր Համբարձում Քեչեկի անունը:

И. Х. ГЕВОРКЯН
АМБАРЦУМ КЕЧЕК

Резюме

Среди основоположников хирургии в Советской Армении имя профессора Амбарцума Серафимовича Кечека занимает особое место. Будучи организатором первой хирургической

кафедры и клиники медицинского факультета Ереванского государственного университета, основателем армянской хирургической школы, долголетним руководителем Медицинского общества Советской Армении А. С. Кечек сыграл огромную роль в развитии хирургической службы, медицинского образования и медицинской науки в нашей республике.

А. С. Кечек родился 6 июня 1872 года в Нахичеване-на-Дону в семье ремесленника. После окончания в 1897 году медицинского факультета Московского университета долгие годы работал в Петербурге, Ростове-на-Дону, Нахичеване-на-Дону, Грузии. В 1923 году был приглашен в Советскую Армению и избран на должность заведующего кафедрой хирургии медицинского факультета Ереванского государственного университета.

А. С. Кечек—автор более 30 научных работ. Он является одним из основоположников светолечения в хирургии.

Умер 3-го сентября 1948 г. на 77-ом году жизни.

Заслуги А. С. Кечека в области здравоохранения, высшего медицинского образования, подготовки кадров и медицинской науки высоко оценены. Еще в 1935 г. ему присвоено почетное звание заслуженного деятеля науки. Он награжден орденом Трудового Красного Знамени. Его имя носит хирургическое отделение Республиканской клинической больницы. Правительством республики учреждена стипендия имени А. С. Кечека, которую получает один из лучших студентов института решивший посвятить себя хирургии.